

Ծննդեան քառասնօրէից փոփոխութիւնը, ըսելով՝ թէ որպէս զի ժողովուրդը չձանձրանար երկարատեւ պահեցողութենէն, հայրապետները զանոնք վերածեր են շաբաթապահոց. «եւ է այժմ ժէ շաբաթապահը»։ Ասոնց մէջ կ'իմանայ Զատկի աղուհացից եօթ շաբաթներն եւ ուրիշ տասն անջատ շաբաթներ, զորս «մեծն Կերսեսի» կանոնները, կ'ըսէ, սահմանած էին՝ «յամենայն ամսամուտս պահել շաբաթ մի, զոր այժմ պահեմք տասն շաբաթ տասն ամսեանն» (Քրգ. ձմր. 144)։ Արդարեւ Կերս. Աշտարակեցւոյն – ոչ պարթեւին – կանոնաց մէջ պատուէր կայ՝ «յամենայն ամսեան պարապիլ խնդրուածոց զաւուրս շաբաթու միով» (Աշտ. 1Թ)։ Հոս է շաբաթապահոց հնագոյն յիշատակութիւնը, զոր յետոյ Ասողիկ եւս կը կրկնէ (197)։ Գր. Անաւարզեցիին կարգեր էր՝ եւ Սոյ 1307ի ժողովը կը հաստատէր՝ վեցօրեայ պահը մ'ալ նորահաստատ Ծննդեան (25 Գեկ.) տօնէն յառաջ (Պալձ. 276)։

Բայց թէ շաբաթապահը երկու քառասնօրոց վերածումը լինին, կը տարակուսիմ, նկատելով նախ՝ որ այդ քառասնօրոցը դեռ կան ու կը յիշուին Աշտարակեցիէն շատ վերջ, առանց զանազանու-